Հարավային Կովկասում անվտանգության նկատմամբ ԱՄՆ մոտեցումների փոխակերպումը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 25.03.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է ամերիկացի կոնգրեսական Ջո Ուիլսոնի նախաձեռնությունը՝ «Կովկասի նկատմամբ Չինաստանի վերահսկողությանը հակազդելու մասին» օրինագիծը, որը նշանավորում է ԱՄՆ-ի անցումը Վրաստանի նկատմամբ նոր, ավելի ճկուն ռազմավարության: Քննարկվում են «ազատական հեղափոխության» ձախողման և տարածաշրջանում Արևմուտքի ազդեցության կորստի պատճառները, որոնք կապվում են Պեկինի իրատեսական ներդրումային քաղաքականության և արմատական օրակարգից վրացական հասարակության հոգնածության հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում «Միջին ուղի» երթուղու ռազմավարական նշանակությանը և վրացական ու հայկական թղթածրարների փոխկախվածությանը Հարավային Կովկասի անվտանգության համատեքստում: Եզրակացվում է, որ Վաշինգտոնն ձգտում է վերականգնել հավասարությունը ՌԴ-ի և ՉԺՀ-ի հետ՝ Թբիլիսիի հետ առճակատումից անցնելով Վրաստանին իր ազդեցության ուղեծրում «փափուկ» ներկառուցելու փորձերի:

Բանալի բառեր. *Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականություն, «Վրացական երազանք», «Միջին ուղի» (Middle Corridor), Ջո Ուիլսոնի օրինագիծ, ամերիկա-վրացական հարաբերություններ, չինական ընդլայնում, տարածաշրջանային անվտանգություն, Հայաստանի արտաքին քաղաքականություն, ռուս-չինական ազդեցություն:*

1. ԱՄՆ նոր ռազմավարության հաստատութենականացումը. Ջո Ուիլսոնի ծրագիրը

Իրանի շուրջ լարվածության սրման համապատկերում «*վրացական հարցը*» կրկին արդիականանում է ԱՄՆ-ի հարավկովկասյան ռազմավարական օրակարգում: Մարտի սկզբին Հարավային Կարոլինայից Ներկայացուցիչների պալատի անդամ, հանրապետական Ջո Ուիլսոնը Կոնգրես է ներկայացրել «Կովկասի նկատմամբ Չինաստանի վերահսկողությանը հակազդելու ակտ» վերնագրով օրինագիծ: Փաստաթուղթն իրենից ներկայացնում Վրաստանի նկատմամբ ԱՄՆ գործողությունների ծրագիր և նախատեսում է երկաստիճան մոտեցում:

1. **Աուդիտ և վերլուծություն**. ԱՄՆ Պետդեպարտամենտը, Ազգային անվտանգության գործակալությունը և Պենտագոնը պարտավոր են 6 ամսվա ընթացքում իրականացնել Վրաստանում ռուսական և չինական հետախուզական կառույցների գործունեության ծավալների և մեթոդների համալիր գնահատում: Ստացված տվյալների հիման վրա կպատրաստվի Վաշինգտոնի հակագործողությունների ծրագրով զեկույց:

2. **Երկարաժամկետ պլանավորում**. Թբիլիսիի հետ փոխգործակցության 5-ամյա ռազմավարության ձևավորում, որի պատասխանատվությունը դրվում է Պետդեպարտամենտի վրա:

Ջ. Ուիլսոնն օրինագծի ընդունման անհրաժեշտությունը պատճառաբանել է Վրաստանում չինական կապիտալի լայնածավալ ընդլայնման սպառնալիքով և Թբիլիսիի վրա Մոսկվայի քաղաքական ազդեցության ուժեղացմամբ, ինչի արդյունքում արևմտյան

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 23.03.2026 թ.:

դերակատարները, մասնավորապես՝ ԱՄՆ-ը, կորցնում են վերահսկողությունը ՉԺՀ-ն Եվրոպայի հետ կապող «Միջին ուղի» ռազմավարական տրանսպորտային-էներգետիկ երթուղու նկատմամբ: Կոնգրեսականի կարծիքով՝ վրացական ուղու վրա Մոսկվայի և Պեկինի շահերը լիովին համընկնում են, ուստի նրանք հավասարապես աջակցում են Թբիլիսիի կառավարությանը, որը նվազագույնի է հասցրել հարավկովկասյան այդ հանրապետությունում Արևմուտքի ազդեցության լծակները:

Օրինագծին նվիրված լսումների ժամանակ Ուիլսոնը Վրաստանը բնութագրել է որպես «*երկու բռնապետական ուղեգծերի միախառնման*» կետ, որոնք սպառնում են նրա ինքնիշխանությանը: Նա «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլիին բնորոշել է որպես մի առաջնորդի, ով երկրի տնտեսական ապագան պատվիրակել է Չինաստանի կոմկուսի վերահսկողությանը:

2. Արևմտյան ազդեցության քայքայումը

Այն տպավորությունն է ստեղծվում, որ ԱՄՆ-ը մտադիր է ՌԴ-ից և ՉԺՀ-ից ռևանշ վերցնել խորհրդարանական (2024 թ. հոկտեմբեր), նախագահական (2024 թ. դեկտեմբեր) և ՏԻՄ (2025 թ. հոկտեմբեր) ընտրություններում վրացական արևմտամետ ընդդիմության պարտությունից հետո, ընտրություններ, որոնք, Վաշինգտոնի գնահատմամբ, կեղծվել են իշխանության կուսակցության կողմից՝ ռուս և չինացի դաշնակիցների օգնությամբ: Ըստ որոշ տեղեկությունների, Ուիլսոնի նախաձեռնությանը ջերմեռանդ աջակցում է նախագահ Դ. Թրամփը, որը կարծում է, թե Բայդենի վարչակազմը պասիվ դիրք է զբաղեցրել Վրաստանի վերջին տարիների ներքաղաքական զարգացումների նկատմամբ, ինչը հանգեցրել է այդ երկրում ռուս-չինական դիրքերի ամրապնդմանը:

Պաշտոնական Վաշինգտոնը Վրաստանի ներքաղաքական գործընթացներից, փաստորեն, ինքնամեկուսացվել է 2024 թ. նոյեմբերին, երբ ընդդիմության բողոքի ցույցերի համապատկերում սառեցվեց ռազմավարական գործընկերության ծրագիրը: Այդ միջոցը հանգեցրել է պաշտոնական Թբիլիսիի վրա ԱՄՆ-ի քաղաքական ազդեցության կտրուկ թուլացման: Առաջացած հաստատութենական բացն անմիջապես լցվեց Պեկինով, այն դեպքում, երբ «Վրացական երազանքը» միջազգային օրինականացման և այլընտրանքային գլոբալ ուժի կենտրոնի վրա հենվելու կարիք ուներ:

3. Չինաստանի տնտեսական ծավալումը

Դրան հաջորդած ժամանակահատվածում վրացական ընդդիմադիր կառույցների աջակցության հիմնական ծանրաբեռնվածությունն ընկել էր ԵՄ-ի և Մեծ Բրիտանիայի վրա, որոնք փորձում էին փոխկապակցված ՀԿ-ների միջոցով ապակայունացնել իրավիճակը և խստացնել պատժամիջոցների ռեժիմը: Սակայն եվրոպացի դերակատարների ջանքերը բավարար չէին Թբիլիսիի արտաքին քաղաքական ուղեգծի շտկման համար: ԱՄՆ-ն այդ գործընթացներին մասնակցել է այնպիսի կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք են

USAID-ը և NED-ը, սակայն որոշ չափով խուսափել է նրանց գործունեությունն ուղղակի զուգորդել ամերիկյան կառավարության հետ: Արդյունքում ԵՄ-ի ջանքերը բավարար չէին Թբիլիսիի արտաքին քաղաքական ուղեգծի վերաձևավորման համար: «Վրացական երազանքը» հասարակական տրամադրությունների վերարտադրման գործընթացում հաջողությամբ օգտագործել է եվրոպական երկրների ապակառուցողական վարքի և Չինաստանի իրատեսական գործողությունների հակադրությունը: Մինչ Արևմուտքը կենտրոնանում էր օրենսդրության վերանայման պահանջների վրա (Օրենք «Օտարերկրյա գործակալների մասին») և հակված էր Թբիլիսիին ներգրավել տարածաշրջանային հակամարտության մեջ, Չինաստանը հետևողականորեն ներդրումներ էր կատարում հանրապետության երկաթուղային և նավահանգստային ենթակառուցվածքներում՝ այն ինտեգրելով «Միջին ուղու» լոգիստիկ ցանցին: Վրացական հասարակությունն իր ճնշող մեծամասնությամբ դրականորեն ընդունեց գործող իշխանությունների ձգտումը՝ վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն, չեզոքություն պահպանել ուկրաինական խնդրի նկատմամբ և հասնել տնտեսական կայունության, ինչն ապահովում էր Չինաստանի հետ ռազմավարական գործընկերությունը, ինչը ծանրաբեռնված չէ քաղաքական խնամակալությամբ:

4. Ազատական հոլովույթի ճգնաժամը

Այս համապատկերում Վրաստանի ներքին օրակարգում Արևմուտքի ներգրավվածության բարձր ինտենսիվությունն աստիճանաբար հոգնածություն և գրգռվածություն է առաջ բերել հասարակության շրջանում: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ արմատական ընդդիմությունը չափազանց գաղափարախոսականացման հետևանքով կորցրել է վստահության վարկանիշը, որը չի ամրապնդվել քաղաքական իրատեսությամբ: Ընդդիմության առաջարկած արմատական «*դեպի Արևմուտք շրջադարձը*» քաղաքացիների շրջանում սկսեց ընկալվել որպես ոչ իրատեսական և վտանգավոր ռազմավարություն՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական խզվածքի գծում Վրաստանի աշխարհագրական դիրքը:

Արևմտամետ ուղեգծի նկատմամբ սոցիալական հուլությունը հաստատվել է 2025 թ. հոկտեմբերին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքներով, որոնցում «Վրացական երազանքը» մեծամասնություն է ստացել տեղական կառավարման բոլոր մարմիններում: Այս արդյունքները, փաստորեն, արձանագրեցին «*ազատական հեղափոխության*» փորձերի պարտությունը, ինչը հանգեցրեց արևմտամետ քաղաքական ուժերի և ՀԿ-ների լուսանցքում հայտնվելուն:

5. Մոտեցումների տարբերակումը. եվրոպական ճնշումներից դեպի ամերիկյան իրատեսություն

Այս համատեքստում կոնգրեսական Ջո Ուիլսոնի նախաձեռնությունը ներկայացվում է որպես ռազմավարության վերագործարկվում «*մաքուր էջից*»: Պատահական չէ, որ

հանրապետականն ԱՄՆ իշխանություններին և հատուկ ծառայություններին կոչ է անում համապարփակ գույքագրել Վրաստանում ամերիկյան քաղաքական, հետախուզական և տնտեսական ներուժը՝ իրական հենակետերը որոշելու համար: Ուիլսոնի օրինագիծը, ըստ էության, արձանագրում է այն փաստը, որ ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցներն այս փուլում պարտվել են ՉԺՀ-ի և ՌԴ-ի հետ մրցակցությունում, և ռևանշի հասնելու համար անհրաժեշտ է գործողությունների ողջ ռազմավարության վերակառուցում: Պահանջվող վերակազմավորումը ենթադրում է առաջնորդության անցում Միացյալ Նահանգներին՝ օժանդակ դեր հատկացնելով եվրոպական գործընկերներին:

Որպես Եվրոպայում անվտանգության և համագործակցության ԱՄՆ Հելսինկյան հանձնաժողովի («Հելսինկյան հանձնաժողով») համանախագահ՝ Ջ. Ուիլսոնը 2021 թ. համակարգել է Վաշինգտոնի գործողությունները Բրյուսելի և Լոնդոնի ջանքերի հետ՝ «Վրացական երազանքը» հավաքական Արևմուտքի ազդեցության ուղեծրում հարկադրաբար (ըստ որոշ գնահատականների) ներգրավելու ուղղությամբ: Հետագայում նա նպաստեց ԵՄ-ի և Մեծ Բրիտանիայի ներգրավմանն այդ հարավկովկասյան հանրապետության ներքաղաքական գործընթացներին՝ նպատակ ունենալով գործող իշխանությանը հեռացնել կամ ընտրությունների, կամ «*հեղափոխության*» միջոցով: Հաշվի առնելով դա՝ կոնգրեսականը ծանոթ է վրացական ներքաղաքական ուղու վրա եվրոպական դաշնակիցների և գործընկերների գործողությունների փորձին ու, հետևաբար, տեղյակ է Բրյուսելի և Լոնդոնի սխալ հաշվարկներին, որոնք հանգեցրել են Թբիլիսիում իշխանափոխության ծրագրերի տապալմանը: Մասնավորապես, խոսքն իր արտաքին քաղաքականության կոմպլեմենտարությունն ապահովելու Թբիլիսիի փորձերի նկատմամբ Եվրոպական երկրների և հաստատությունների կոշտ մոտեցման, Թբիլիսիի դեմ քաղաքական պատժամիջոցների կիրառմամբ վրացական իշխանությունների հետ աշխատանքի հաճախ ոչ դիվանագիտական մեթոդների և Վրաստանում ընդդիմադիր հանրահավաքների ժամանակ առավել արմատական տրամադրված եվրոպացի քաղաքական գործիչների ելույթների մասին: Ակնհայտ է, որ Ջ. Ուիլսոնը և ԱՄՆ-ում նրա նախաձեռնությանն աջակցող քաղաքական գործիչները հանգել են այն եզրակացության, որ այդ մեթոդները միայն սաստկացրել են վրաց հասարակության գրգռվածությունն ու հուլությունն Արևմուտքի նկատմամբ և ամրապնդել «Վրացական երազանքի» համոզմունքը Եվրոպայից հեռու մնալու անհրաժեշտության մասին՝ առնվազն ընթացիկ փուլում սառեցնելով եվրաինտեգրման ծրագրերը:

6. Երկկողմանի երկխոսության վերափոխդասավորում

Լրատվադաշտի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ տեղի է ունենում հրաժարում Թբիլիսիի վրա ազդեցության արմատական մեթոդներից և Վրաստանում գործողությունների ավելի չափավոր և զգուշավոր մարտավարության որոնում: Չնայած Ջ.

Ուիլսոնն անձամբ «Վրացական երազանք–Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադիր և պատվավոր նախագահ Բիձինա Իվանիշվիլիի «*բռնապետ*» է անվանել, օրինագծում նրա առաջարկած ամերիկա-վրացական հարաբերությունների վերաբեռնման մեխանիզմը վկայում է Թբիլիսիում իշխանության վրա բազմաչափ ազդեցությունը զորաշարժի ենթարկելու և ընդլայնելու, բայց ոչ պաշտոնանկության նպատակով դրա դեմ պայքար մղելու մտադրության մասին: Խոսքը Վրաստանում ռուս-չինական ազդեցության հետ հավասարության վերականգնման մասին է (առնվազն առաջին փուլում), որին հաջորդում են Մ. Սահակաշվիլիի վերջներգի ժամանակաշրջանի Վաշինգտոն–Թբիլիսի հարաբերությունների մոդելին վերադառնալու հետագա ծրագրերը: Դա հավակնոտ խնդիր է, սակայն Ջ. Ուիլսոնը և նրան աջակցող քաղաքական գործիչները՝ ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Եվրոպայում, նպատակադրված են հենց նման արդյունքի հասնել, քանի որ խնդիրը դիտարկում են Եվրասիայի պաշարների և առևտրային ուղիների համար Վաշինգտոնի և Պեկինի գլոբալ մրցակցության համատեքստում:

Ախտանշական է, որ Կոնգրեսում Ջ. Ուիլսոնի օրինագծի ներկայացման և Հելսինկյան հանձնաժողովի՝ Վրաստանում ռուս-չինական ծավալման թեմայով նրա կազմակերպած լսումների օրերին Վաշինգտոնում կայացել է Վրաստանի խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Նիկոլոզ Սամխարաձեի գլխավորած պատվիրակության հանդիպումն ԱՄՆ Ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալ Էնդրյու Բեյքերի, ինչպես նաև կոնգրեսական Էնդի Օգլսի հետ: Երկու հանդիպումներում էլ խոսվել է «*Միջին ուղու*» զարգացման հեռանկարների, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՉԺՀ-ի հետ Վրաստանի գործընկերության, եվրաինտեգրման, կիբեռանվտանգության և տարածաշրջանային անվտանգության, ինչպես նաև ամերիկա-վրացական գործընկերության վերագործարկման հնարավորության մասին, որը, Ն. Սամխարաձեի խոսքով, սառեցվել էր «*Վրաստանի ներքաղաքական գործընթացներին Վաշինգտոնի և Բրյուսելի միջամտությունից հետո*»: Հանդիպումների արդյունքում կողմերը նշել են «*հարաբերություններում դրական տեղաշարժերը*» և կառուցողական փոխգործակցության հաստատման լավ հեռանկարները:

Հանդիպումները և կոնգրեսական Ուիլսոնի զուգահեռ աշխուժացումը չպետք է զուգադիպություն համարել: Վաշինգտոնը տարբեր մակարդակներով ազդանշաններ է տալիս Թբիլիսիի հետ հարաբերությունների ամբողջական «*վերաբեռնման*» պատրաստակամության մասին, ընդ որում՝ հաշվի առնելով Վրաստանում առկա նոր իրողություններն ու փոխգործակցության ուղղահայաց մոդելը հորիզոնական հոլովույթ տեղափոխելու վերաբերյալ «Վրացական երազանքի» պահանջները:

7. «Վրացական հանգույցի» ազդեցությունը հայկական ուղեգծի կայունության վրա

Վաշինգտոնն առաջնորդվում է Հարավային Կովկասի ամբողջական յուրացման հայեցակարգով, քանի որ այս բարդ տարածաշրջանը դժվարությամբ է ենթարկվում

աշխարհառազմավարական պրոյեկտման՝ դրա բոլոր սուբյեկտների վրա հավասարաչափ ազդեցության բացակայության պայմաններում: ԱՄՆ-ը կարող է, առանց վերականգնման և Վրաստանում իր բազմապլանային ներկայության ավելացման, կորցնել նախկինում այստեղ ձեռք բերված ակտիվները՝ ներկայիս հայկական իշխանության ընդգծված արևմտամետ կողմնորոշման, «*հայ-ադրբեջանական խաղաղ գործընթացի*» կարգավորման և TRIPP նախագծի շուրջ պայմանավորվածությունների տեսքով: Հատկապես այդ ակտիվները վտանգի տակ են հայտնվել Իրանի շուրջ իրավիճակի անորոշության և Հայաստանում մոտեցող խորհրդարանական ընտրությունների համապատկերում, որոնց ելքը դժվար է կանխատեսել: TRIPP-ը փաստացի հայտնվել է ներունակ պատերազմի գոտում, ինչի պատճառով «Միջին ուղու» վրացական երթուղիների նշանակությունը բազմապատկվում է:

Մյուս կողմից, եթե ԱՄՆ–Վրաստան և Եվրոպա–Վրաստան հարաբերություններում իրավիճակը փակուղային մնա, ապա դա բացասաբար կանդրադառնա Երևանում ազատական ուժերին աջակցելու Արևմուտքի հնարավորությունների վրա, ուժեր, որոնց դիրքերը թուլացել են Անկարայի և Բաքվի հետ ամեն գնով հարաբերությունների կայունացմանն ուղղված նրանց քայլերի համապատկերում: Չի բացառվում, որ հենց դա նկատի ուներ Նիկոլ Փաշինյանը, երբ 11.03.2026 թ. Եվրախորհրդարանում իր ելույթի ժամանակ Երևանի եվրաինտեգրման շանսերն ուղղակիորեն կապել է վրաց-եվրոպական հարաբերություններում տիրող իրավիճակի հետ: Ակնհայտ է, որ նա թափանցիկ հասկացրել է. Թբիլիսիի հետ հարաբերությունների սառեցումը պահպանելու դեպքում Արևմուտքը կկորցնի Երևանը, իսկ դրա հետ մեկտեղ նաև տարածաշրջանային հարաբերությունների ամբողջ կառուցվածքը, որը մանրակրկիտ նախագծված է Ռուսաստանին վերջնականապես վտարելու և Հարավային Կովկասում չինական աշխարհատնտեսական ծավալումը սահմանափակելու համար: Ստեղծված պայմաններում Վաշինգտոնն արագացնում է վերադարձը վրացական օրակարգ՝ գիտակցելով խուսավարելու համար ժամանակավոր պաշարի կրիտիկական նվազումը: